# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

*Archbishop Torkom Manoogian, Primate*


Մարտ 15, 1990

Արժանաշնորհ
Տ. Առնակ Ա. Քհնյ. Գասպարեան
Հովիւ Ս. Թովմաս Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Թէնէֆլայ.

Սիրելի Տէր Հայր,

Ստացուած է Առաջնորդ Սրբազան Հօր ուղղուած Մարտ 7, 1990 թուակիր ձեր նամակը։

Այս նամակով կը տեղեկացնէք թէ Փետրուար 4-ին, 1990, տեղի ունեցած է համայնքին Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի հինգ անդամները։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացումը։

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը՝

Սիւզըն Տաղլեան
Ճան Տէրտէրեան
Արա Մարթայեան
Արա Փէքմեզեան
Կարապետ Եազըճեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն։

Աղօթակից

Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ